ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ 2018-19 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Ներկայումս համալսարանն ունի շուրջ 97 կնքված պայմանագրեր հայաստանյան, եվրոպական, ամերիկյան և ԱՊՀ տարբեր բուհերի և միջազգային կազմակերպությունների հետ: Այդ շրջանակներում համալսարանն ակտիվորեն համագործակցում է շուրջ 20 բուհերի և կազմակերպությունների հետ:

2018-19 ուս. տարում կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 9 հուշագրեր և պայմանագրեր.

- Արևմտյան Ատիկայի համալսարան (Հունաստան),
- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ (ՀՀ)
- Շրջակա միջավայրի կայունության աջակցության կենտրոն, ՀԿ (ՀՀ)
- «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամ (ՀՀ)
- ՀՀ Արարատի մարզպետարան
- Լիսաբոնի համալսարանի ագրոնոմիական դպրոց (Պորտուգալիա)
- Կառավարման հարավային ինստիտուտ մասնավոր կրթական հաստատություն (ՌԴ)
- Հռոմի Սապիենցա համալսարան (Իտալիա)
- «Վախենինգենի համալսարան և Հետազոտություն»- բուսաբուծության բաժին (Նիդերլանդներ)

Միջազգային կապերի դեպարտամենտի քաղաքականությունն է՝ պայմանագրեր կնքել այն բուհերի կամ կազմակերպությունների հետ, որոնց հետ իրականում հնարավոր է համագործակցել, այլ ոչ թե շատացնել պայմանագրերի քանակն՝ առանց իրական համագործակցության:

ՀԱԱՀ-ի համար կարևոր և գործուն կոնսորցիումներ են Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի գյուղատնտեսական համալսարանների ասոցիացիան

(CASCADE), որի շրջանակներում պարբերաբար իրականացվում են հանդիպումներ և քննարկումներ, ինչպես նաև Եվրոմիության Էրազմուս+ ցանցային ծրագրերի բուհերը:

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ1 ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԱԱՀ-ի ուսանողների և աշխատակիցների շարժունության հիմնական գործիքը Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունություն ծրագիրն է: 2018-19 թթ. դրա շրջանակներում իրականացվել են բազմաթիվ դասավանդումներ, վերապատրաստումներ և ուսուցում՝ համագործակցություն ծավալելով շուրջ 25 տարբեր եվրոպական համալսարանների հետ: 2018-19 ուս. տարվա ընթացքում ՀԱԱՀ-ն ունեցել է 36 Էրազմուս+ ՀԳ1 ծրագրեր, որից 19-ը՝ նոր, հաստատված 2018 թ.-ին, իսկ 18-ը՝ 2017-18 ուս. տարվանից: Ընդ որում, արդեն 2-րդ տարին անընդմեջ, Էրազմուս+ ծրագրերի քանակով ՀԱԱՀ-ն երկրորդն է ՀՀ բուհերի շարքում: Հատկանշական է, որ ՀԱԱՀ-ի հին գործընկեր համալսարանների հետ կապը չի խզվում, բայց միաժամանակ ավելանում են նաև նոր գործընկեր-բուհեր:

Էրազմուս+ շարժունության տվյալներ

	Հաստատություն	Արտագնա աշխատա-կիցներ	Արտագնա ուսա-նողներ	Ներ-գնա աշխա-տակիցներ	Ներ-գնա ուսա-նողներ
1.	Միգել Հերնանդեսի անվան համալսարան, Իսպանիա	1	4	4*	
2.	Ալմերիայի համնալսարան, Իսպանիա	1	2		
3.	Արևմտյան Ատիկայի համալսարան, Հունաստան	2*, 2		4*	

4.	Պիրեուսի կիրառական գիտությունների համալսարան, Հունաստան	1			
5.	Պիրեուսի համալսարան, Հունաստան	1	1		
6.	Շչեցինի համալսարան, Լեհաստան	1	3	1*	
7.	Քվիծինի Պովիսլանսկի քոլեջ, Լեհաստան	1			
8.	Սիլեսիայի համալսարան, Լեհաստան	1*	1		
9.	Կրակովի Յագելոնյան համալսարան, Լեհաստան	2*	1	1*	
10.	Ռուսեի Անջել Կանչևի համալսարան, Բուլղարիա	1*	2	1*	
11.	Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարան, Ավստրիա		1	3*	
12.	Ավեյրոյի համալսարան, Պորտուգալիա	1*	3	1*	
13.	Մինհոյի համալսարան, Պորտուգալիա	1	1		
14.	Սալերնոյի համալսարան, Իտալիա	1*	4		
15.	Ֆոջջայի համալսարան, Իտալիա	1	1		
16.	Տուշայի համալսարան, Իտալիա	6*, 4	7		
17.	Սապիենցայի համալսարան, Իտալիա	2	4		
18.	Նիտրայի գյուղատնտեսական համալսարան Սլովակիա	5			
19.	Վայհենշտեֆան ԿԳՀ, Գերմանիա	2			

20.	Գայզենհայմի գինու համալսարան, Գերմանիա		5		
21.	Ռադբաուդի համալսարան Նիդերլանդներ	4 (օգոստոսին նախա-տեսվում է 7 վերապատրաստում)	(1 օգոս-տոսին)		
22.	Գրանադայի համալսարան			2	
23.	Էստոնիայի բնական գիտություն-ների համալսարան		3		
	Ընդամենը	43+7	44	17	-

* - դասախոսություններ, մնացածը՝ վերապատրաստումներ

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳՀ ԾՐԱԳՐԵՐ

ՀԱԱՀ-ում շարունակվում է ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված 2 *Էրազմուս+ Հիմնական Գործողություն-2 ծրագրերի* իրականացումը*:*

«Տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության ագրարային ուսուցման ոլորտում» (TOPAS) ծրագիրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են 3 աշխատանքային հանդիպումներ Վոիթելի համալսարանական քոլեջում, ՀԱԱՀ-ում և Ուկրաինիայի բնագիտական և կենսագիտական համալսարանում: Հանդիպումների ընթացքում քննարկվել է ծրագրի կատարողականը, մշակվել են հետագա քայլերը և այլ ծրագրային հարցեր: TOPAS-ի շրջանակներում կատարվել են դասախոսների և ուսանողների 2 վերապատրաստումներ: Փետրվարին և մարտին ՀԱԱՀ 4 դասախոսներ մասնակցեցին երկշաբաթյա վերապատրաստման դասընթացներին Գերմանիայում և Մեծ Բրիտանիայում: Թվով 8 ուսանողներ (որոնցից 4-ը՝ Մեծ Բրիտանիայում, 28 օր տևողությամբ, իսկ 4-ը՝ Գերմանիայում) վերապատրաստվել են այդ ծրագրի շրջանակներում, ընդ որում, բացի դասերից, նրանք այցելել են տնտեսություններ,

մասնակցել տվյալների հավաքագրմանն ու վերլուծմանը: Ներկայումս ագրարային մենեջմենթի 4 մագիստրանտներ TOPAS-ի շրջանակներում վերապատրաստվում են Գերմանիայում:

Ս/թ մայիսի 31-ին TOPAS-ի ֆինանսավորմամբ ՀԱԱՀ-ում բացվեց համակարգչային լսարան, որը կծառայի տվյալների վերամշակմանն ու էլեկտրոնային դասընթացների իրականացմանը: Ծրագրի շրջանակներում բենչմարքինգի միջոցով վերանայվել և արդիականացվել են ԱԷԿ-ՍԷԿ բակալավրային և Ագրարային մենեջմենթ մագիստրոսական կրթական ծրագրերի վերջնաարդյունքները, ուսումնական պլանները, այժմ ընթացքի մեջ են դրանց առարկաների ծրագրերի կազմումը:

TOPAS-ի շրջանակներում աշնանը կազմակերպվեց հանդիպում գործատուների հետ, որի ընթացքում վերհանվեցին ոլորտի մասնագետների թույլ և ուժեղ կողմերը, այն պահանջները, որոնք ներակայացվում են ժամանակակից աշխատաշուկայի կողմից: 2019 թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին Ագրոբիզնեսի և տնտեսագիտության 30-ից ավելի դասախոսներ վերապատրաստվեցին ուսանողակենտրոն ուսուցման և գնահատման ուղղությամբ, որը տվյալ ծրագրի վերջնաարդյունքներից մեկն է:

«Կենսաարտադրանքների տեխնոլոգիայի ոլորտում գերազանցության հայկական ցանց» (AbioNet) ծրագիրի շրջանակներում իրականացան 2 ծրագրային հանդիպումներ Դրեզդենում (հոկտեմբեր, 2018) և Տերամոյում (մայիս, 2019): Տերամոյում մասնակցիները նաև վերապատրաստվեցին իրենց մասնագիտական ուղղվածությունների, ինչպես նաև կրթական պլաններում ձեռնարկատիրական հմտությունների խթանման ուղղությամբ: Ծրագրի շրջանակներում կազմվել է սննդի անվտանգության մագիստրոսական ուսումնական պլան, հստակեցվել են մասնագիտության կրթական վերջնաարդյունքները, կազմակերպվել են հանդիպումներ գործատուների, ուսանողների, դասախոսներ հետ: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել լաբորատոր գույք, որը հիմք կհանդիսանա սննդի անվտանգության և որակի վերահսկման ուղղությամբ նոր լաբորատորիայի ստեղծման համար:

Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից անցկացված մոնիթորինգի արդյունքում թե TOPAS, թե ABioNet ծրագրերը ստացել են դրական գնահատականներ կատարված աշխատանքների համար:

ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ

Եվրասիա կրթական ծրագրի (CPEA-LT-2016/10092) ֆինանսավորմամբ 2017 թ.-ից Նորվեգիայի Թրոմսոյի Արտկիկական համալսարանի, Նորվեգիայի Կենսաէկոնոմիկայի ինստիտուտի հետ համատեղ իրականացվում է «Գյուղատնտեսական զարգացման համար Նորվեգիա-Հայաստան համագործակցության ծրագիր բույսերի մոլեկուլային կենսաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառներում» ծրագիրը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ-ի ուսանողների համար կազմակերպվել են դասընթացներ «Բույսերի կենսատեխնոլոգիա», «Գիտական հաղորդակցում անգլերենով», «Մոլեկուլային կենսաբանություն», «Կենսաինֆորմատիկա», «Ներկայացման հմտություններ» թեմաներից: 8 ուսանողներ և ասպիրանտներ իրենց հետազոտություններն են կատարել և վերապատրաստվել Նորվեգիայում:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 2018-ին մասնակցեց Կրթության միջազգայնացման հոլանդական կազմակերպության՝ NUFFIC-ի աջակցությամբ ֆինանսավորվող ծրագրի մրցույթին և հնարավորություն ձեռք բերեց ՀԱԱՀ-ում անցկացնելու «Հայաստանում կլիմայի փոփոխությունների նկատմամբ բույսերի գենետիկական ռեսուրսների և նախաբուծման կառավարման ուղղությամբ կարողությունների զարգացում» թեմայով երկշաբաթյա վերապատաստումը: Մայիսի 27-ից մինչև հունիսի 7-ը ՀԱԱՀ 15 դասախոսներ և «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի գիտաշխատողներ վերապատաստվեցին վերոնշյալ թեմայով: Դասընթացն ընդգրկում էր ինչպես տեսական դասախոսություններ, այնպես էլ գործնական պարապմունքներ՝ դաշտային այցելությունների տեսքով:

Ցավալի է, որ նախապես հայտագրված մի քանի մասնակիցներ որոշ պատճառներով չմասնակցեցին վերապատրաստմանը, ինչի մասին հայտնեցին կամ վերապատրաստման սկզբից անմիջապես առաջ, կամ էլ վերապատրաստման ընթացքում: Նկատվեցին նաև խոչընդոտներ մասնակիցների ստորաբաժանումների ղեկավարների կողմից, մասնավորապես՝ մի քանիսն ուղղակի թույլտվություն չստացան լքել ամբիոնը, չնայած այն պայմանավորվածությանը, որ ամբիոնները պետք է ապահովեն մասնակիցների մասնակցությունը:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Մասնակցություն գիտաժողովներին և համաժողովներին: 2018-2019 ուսումնական տարում ՀԱԱՀ 10 աշխատակիցներ մասնակցել են մի շարք միջազգային գիտաժողովների, համաժողովների և մրցույթների: Դրանք են.

- Միջազգային պատանեկան մրցույթ (Ռուսաստան, 2018),
- Հռոմի պետական համալսարանում կայացած միջազգային գիտաժողով (Իտալիա, 2018),
- Համաշխարհային անասնաբուժական կոնգրես (Սինգապուր, 2018),
- GIZ «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» (ԿԻԿ) ծրագրի շրջանակում «Ինտեգրված պայքար էրոզիայի դեմ. Տեղական փորձից մինչև Հարավային Կովկասի տեսլական» խորագրով տարածաշրջանային համաժողով (Վրաստան, 2018),
- «Ձեռնարկատիրական ունակությունների զարգացման միջոցով զբաղվածության խոչընդոտների կրճատման» ծրագիր (Թուրքիա, 2019),
- «Ագրոֆորում Մարե Բալտիկում» 7-րդ միջազգային համաժողով (Էստոնիա, 2019),
- «Գլոբալ կենսաբազմազանության ինֆորմացիոն միջոցի» (ԳԿԻՄ) Եվրոպական հանգույցների 11-րդ հանդիպում (Նորվեգիա, 2019),
- «Գլոբալ կենսաբազմազանության ինֆորմացիոն միջոցի» (ԳԿԻՄ) Եվրոպական հանգույցների 11-րդ հանդիպում (Նորվեգիա, 2019):

Միջազգային շաբաթներ: 2018-2019 ուսումնական տարում ՄԿԴ 5 և ՀԱԱՀ այլ ստորաբաժանումների 4 աշխատակիցներ մասնակցել են ՀԱԱՀ համագործակցող համալսարանների կողմից կազմակերպվող միջազգային շաբաթներին (Պիրեուսի համալսարան, Ալմերիայի համալսարան, Շչեցինի համալսարան, Ռադբաուդի համալսարան, Մինհոյի համալսարան, Ռուսեի համալսարան, Արևմտյան Ատիկայի համալսարան, Պովիսլանսկի քոլեջ): Դրանք ի սկզբանե նախատեսված են միջազգային

բաժինների աշխատակիցների համար, սակայն հիմք ընդունելով ՄԿԴ-ի ռազմավարությունը, այն է՝ խթանել միջազգայնացման հմտությունները ինստիտուցիոնալ մակարդակով, միջազգային շաբաթներին մասնակցեցին նաև այլ ստորաբաժանումների աշխատակիցներ:

Միջազգային շաբաթների ընթացքում ՀԱԱՀ մասնակցիները ձեռք են բերել նոր գիտելիքներ և հմտություններ միջազգայնացման ուղղությամբ (բուհի միջազգայնացման ռազմավարություն, օտարերկրյա ուսանողների ներգրավվման նախադրյալներ, շարժունության ղեկավարման հարթակներ, միջազգայնացում տանը և այլն): Ձեռք բերված գիտելիքներով դեպարտամենտի աշխատակցիները պատրաստվում են կիսվել 2019 թ. աշնանը կազմակերպվող միջոցառմանը: Բացի այդ, միջազգային շաբաթների ընթացքում ձեռք են բերվել նոր կապեր տարբեր բուհերի հետ, ինչպես նաև նոր պայմանավորվածություններ՝ համատեղ ծրագրերի իրականացման համար:

Վերապատրաստումներ: 2018-2019 ուսումնական տարում այլ (բացի Էրազմուս+-ից) ծրագրերով վերապատրաստման մեկնել են ՀԱԱՀ 16 աշխատակիցներ.

- «2018 բարձրորակ պտղաբուծության տեխնոլոգիաների ուսուցում» թեմայով դասընթաց (Չինաստան, 2018), որի շրջանակներում վերապատրաստվեցին ՀԱԱՀ 8 աշխատակիցներ:
- ՀԱԱՀ Միջազգային գիտական ծրագրերի համակարգման բաժնի կողմից իրականացվող և Նորվեգիայի «Բարձրագույն կրթության որակի բարելավման և միջազգային համագործակցության գործակալության» (DIKU) կողմից ֆինանսավորվող ԲիոԴատա ծրագրի շրջանակում կենսաբազմազանության նմուշների հետազոտման, տվյալների կառավարման, ստանդարտացման և տվյալների հրապարակայնացման ինտենսիվ դասընթաց (Բելոռուսիա, 2019), որին մասնակցեցին ՀԱԱՀ 6 աշխատակիցներ:
- Հայ-նորվեգական գիտակրթական համագործակցության ծրագրի շրջանակում 2 աշխատակցիների վերապատրաստում (Նորվեգիա, 2019): Այդ ծրագրի շրջանակներում 2 ուսանողներ մասնակցել են Օսի Կենսագիտության համալսարանում և NIBIO կենսաէկոնոմիկայի ինստիտուտում կազմակերպված դասընթացներին:

ՀԱԱՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

2018-19 ուս. տարում ՀԱԱՀ-ում վերապատրաստվել և դասախոսություններով հանդես են եկել 17 դասախոսներ տարբեր երկրների համալսարաններից (Կրակովի Յագելոնյան համալսարան, Արևմտյան Ատիկայի համալսարան, Նորվեգիայի Տրոմսոյի Արկտիկական համալսարան, Ռուսեի Անջել Կանչևի համալսարան, Միգել Հերնանդեսի անվան համալսարան, Շչեցինի համալսարան, Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարան և այլն):

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ-ն հյուրընկալել է հյուրեր տարբեր երկրներից: Այս այցերի նպատակը երկկողմանի կապերի ստեղծումն էր կամ առկա կապերի ընդլայնումը:

Մասնավորապես, երկկողմանի համագործակցության սկսելու և խթանելու ուղղությամբ ՀԱԱՀ-ում հյուրընկալվել են.

1. Հայաստանում Արգենտինայի արտակարգ և լիազոր դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեիտիայի գլխավորած պատվիրակությունը, որի ժամանակ քննարկվեց Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ փորձացուցադրական տարածք հիմնելու հնարավորությունը:
2. Շվեդիայի Սյոդերթյորնի համալսարանի ավագ դասախոսներ Պատրիկ Դինեցին, Մադելին Բոնոյին, Պաուլինա Ռիտկյոնենին և միջազգայնացման գծով ռեկտորի խորհրդական Գունիլա Գուներին, որի ընթացքում քննարկվեցին համատեղ ծրագրեր իրականացնելու, ուսանողների և դասախոսների շարժունություն իրականացնելու հարցերը:
3. Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի պատվիրակության ղեկավար, Իտալիայի Կենսաբանության, գյուղատնտեսության և սննդի դեպարտամենտի տնօրեն Ֆրանչեսկո Լորետոն, որի ժամանակ քննարկվեց համատեղ գիտահետազոտական ծրագեր մշակելու հարցը:
4. ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը:

5. Նիդերլանդների թագավորության դեսպանատան ներկայացուցիչները՝ փոխդեսպանի գլխավորությամբ, որի ընթացքում քննարկվեցին ՀԱԱՀ-նիդերլանդական բուհերի կապի ընդլայման հարցերը:

ՀԱԱՀ-ում կազմակերպվել են նաև միջազգային սեմինարներ և տարաբնույթ հանդիպումներ, մասնավորապես.

1. 2018 թ սեպտեմբերին «Էրազմուս+» երիտասարդների փոխանակման միջազգային ծրագրի շրջանակներում «Երիտասարդության միքս» ՀԿ-ի կողմից իրականացվող «Գյուղատնտեսությունը երիտասարդ ձեռներեցների համար» ծրագրի ընթացքում ՀԱԱՀ-ն հյուրընկալեց աշխարհի 8 երկրներից ժամանած, գյուղատնտեսությամբ հետաքրքրվող 18-30 տարեկան 40 երիտասարդների:
2. 2018 նոյեմբերին տեղի ունեցավ նորվեգական Բարձրագույն կրթության որակի բարելավման և միջազգային համագործակցության գործակալության DIKU-ի կողմից ֆինանսավորվող «ԲիոԴատա» ծրագրի տեղեկատվական սեմինարը:
3. 2019 թ ապրիլին անցկացվեց «Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանումը ՀՀ-ում» թեմայով խորհրդաժողովը, որը համատեղ կազմակերպել էին Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (ՀԳՀՄ) և Ագրարային համալսարանը՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) մասնակցությամբ:

Էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից կազմակերպվող ամենամյա տեղեկատվական օրերն այս տարի կազմակերպվեցին ՀԱԱՀ-ում (2018 թ.-ի նոյեմբեր): տԱյդ ժամանակ Տարբեր բուհերի ներկայացուցիչները ծանոթացան այս տարվա ԵՄ առաջնահերթություններին, տարբեր երկրների և համալսարանների փորձին, ինչպես նաև առաջին անգամ նման հանդիպման շրջանակներում կայացավ ՀՀ մի քանի բուհերի ռեկտորների հանդիպում-քննարկում միջազգային ծրագրերի իրականացման և արդյունքների ներդրման վերաբերյալ:

ՀՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

2018-19 ուս. տարվա ընթացքում ՀԱԱՀ-ի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցները մասնակցել են ՀՀ-ում կազմակերպված տարաբնույթ միջոցառումների:

1. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցած ՌԴ գիտությունների ակադեմիայի Վ. Ա. Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտի Ռուս-հայկական համատեղ VII միջազգային գիտաժողով (սեպտեմբեր, 2018թ):
2. DigiTech Expo 2018, որտեղ Erasmus+ գրասենյակի տաղավարում ՀԱԱՀ ուսանողների մասնակցությամբ ներկայացվեցին Erasmus+ ծրագրի կրթաթոշակային հնարավորությունները (հոկտեմբեր, 2018 թ):
3. «Արմպրոդէքսպո» ամենամյա մասնագիտացված ցուցահանդես, որտեղ ներկայացվեցին ՀՀ և այլ երկրների գյուղատնտեսական արտադրության նոր ու առաջավոր տեխնոլոգիաները, տարբեր ընկերությունների փորձն ու նորարարություններն, ինչպես նաև արտադրատեսակները (նոյեմբեր, 2018 թ):
4. «Եվրոպական Միությունը բիզնեսի համար. Արևելյան համագործակցություն» նախաձեռնության «Առևտրի համար պատրաստ» ծրագրի շրջանակում Առևտրի միջազգային կենտրոնի կողմից կազմակերպված «ՎՎՀԿԿ-ի կոդեքսի համաձայն սննդի անվտանգության կիրառում/իրականացում» թեմայով 4-օրյա աշխատաժողով (մարտ, 2019 թ):
5. Միջազգային գիտաժողով «Ընտանի կենդանիների նյարդաբանություն» թեմայով՝ կազմակերպված Աղվերանում Մանր կենդանիների անասնաբույժների հայկական ասոցիացիայի կողմից (դեկտեմբեր, 2018 թ):
6. Օտարերկրյա որակավորումների ճանաչման արդի հիմնախնդիրների և այդ ուղղությամբ իրականացվող քաղաքականության վերաբերյալ դասընթաց՝ կազմակերպված Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ԱՓՇԱՏԿ) կողմից (դեկտեմբեր, 2018 թ):
7. «Եվրոպական Միությունը բիզնեսի համար. Արևելյան համագործակցություն» նախաձեռնության «Առևտրի համար պատրաստ» ծրագրի շրջանակում Առևտրի միջազգային կենտրոնի կողմից կազմակերպված «ՎՎՀԿԿ-ի (HACCP)

կոդեքսի համաձայն սննդի անվտանգության կիրառում/իրականացում» թեմայով 4-օրյա աշխատաժողով (մարտ, 2019 թ):

8. «Կրթություն և կարիերա էքսպո-2019» միջազգային մասնագիտացված ցուցահանդես, որին մասնակցեց ՀԱԱՀ-ն՝ «Ճիշտ մասնագիտություն, բարեկեցիկ ապագա» խորագիրը կրող տաղավարով (ապրիլ, 2019 թ):
9. Էրազմուս+ «Ժան Մոնե Գործողություններին դիմելու նախապայմանները» թեմայով վերապատրաստման դասընթաց Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում (դեկտեմբեր, 2018 թ):
10. Էրազմուս+ ծրագրի շրջանակում ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների խմբի կողմից նախաձեռնած «Միջազգայնացմանը միտված համալսարանական ռազմավարությունների խթանումը միջազգային բենչմարկինգի միջոցով» թեմայով երկօրյա վերապատրաստման դասընթաց Եվրասիա միջազգային համալսարանում (փետրվար, 2019 թ):
11. «Միջազգային կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում արտասահմանում ձեռք բերած կրեդիդների ճանաչումը» թեմայով հանդիպում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (նոյեմբեր, 2018 թ):

Էրազմուս+ ծրագրի շրջանակներում այս տարի ևս ՀՀ տարբեր բուհերում կազմակերպվեցին տարաբնույթ միջոցառումներ և հանդիպումներ: Դրանց ակտիվորեն մասնակցել են ՀԱԱՀ ՄԿԴ-ի և այլ ստորաբաժանումների աշխատակիցները: Դրանց արդյունքում նրանք ծանոթացել են տարբեր համալսարաններում իրականացվող միջազգային ծրագրերի (Էրազմուս+ ՀԳ2 HARMONY, MODEST, LEAD, BOOST, SMART) ընթացքին և արդյունքներին, որոշ դեպքերում ձեռք են բերել միջազգայնացման և ակադեմիական զարգացման ուղղությամբ նոր գիտելիքներ և մտահղացումներ:

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

2018-19 ուս. տարում ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների և միջազգային համաժողովների և հանդիպումների: Շարժունության և գործուղումների ծանրակշիռ մասն իրականացվել է Էրազմուս+ ծրագրի շրջանակներում:

2018-19 թ. գործուղումներ (ուսանողներ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Erasmus+ ՀԳ1	44	72
Erasmus+ ՀԳ2	8	13
Հայ-նորվեգական գիտակրթական համագործակցության ծրագիր	4	6.5
ՎԿԳՀ, DAAD	3	5
Այլ (գիտաժողով, գիտական աշխատանք)	2	3
Ընդամենը	**61**	**100**

2018-19 թ. գործուղումներ (դասախոսներ և վարչական անձնակազմ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Erasmus+ KA1	49 (որից 7-ը կմեկնեն օգոստոսին)	51
Erasmus+ KA2	16 (որից 2-ը՝ ոչ համալսարանական ծրագրով)	16
«2018 բարձրորակ պտղաբուծության տեխնոլոգիաների ուսուցում« թեմայով դասընթացներ Չինաստանում	8	8
GIZ «Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում» (ԿԻԿ) ծրագիր	2	2

ԲիոDատա (կենսաբազմազանության նմուշների հետազոտման, տվյալների կառավարման, ստանդարտացման և տվյալների հրապարակայնացման ինտենսիվ դասընթաց)	6	6
Հայ-նորվեգական գիտակրթական համագործակցության ծրագիր	2	2
Այլ (գիտաժողով, սեմինար)	14	14
Ընդամենը	**97**	**100**

2018-19 թ. ՀԱԱՀ ժամանումներ (արտասահմանցի դասախոսներ, վարչական անձնակազմ, այլ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Erasmus+ KA1	19	37,8
Erasmus+ KA2 TOPAS	19	42,2
«Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում» ծրագրի (GIZ) շրջանակներում	1	2,2
Այլ	8	17,8
Ընդամենը	**49**	**100**

Միջազգային կապերի դեպարտամենտը՝ աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման ուղղությամբ բարելավել է ՀԱԱՀ կայքի՝ միջազգայնացմանը վերաբերվող բաժինը: 2018-19 ուս. տարում դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվել է 100-ից ավելի հայտարարություններ. Էրազմուս+-ի մրցույթներ, տարբեր կրթաթոշակային ծրագրեր, շարժունության մասնակիցների հոդվածներ և հաշվետվություններ:

ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արտաքին համագործակցության ոլորտում ՀԱԱՀ-ն որոշակի հաջողությունների է հասել Միջազգային կապերի դեպարտամենտի տարած աշխատանքների շնորհիվ.

- ՀԱԱՀ-ն զարգացրել և ընդլայնել է իր համագործակցությունը արտասահմանյան համալսարանների և միջազգային կազմակերպությունների հետ՝ ամրապնդելով հինը և ստեղծելով նոր կապեր:
- Բարձրացել է միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը,
- Բարձրացել է ուսանողների և դասախոսների հետաքրքրվածությունն ու նախաձեռնողականությունը միջազգային ծրագրերին մասնակցելու տեսակետից:
- Ավելի մեծ թվով դասախոսներ և ուսանողներ են մասնակցել միջազգային շարժունության ծրագրերին:

ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով համալսարանի ղեկավարության նախաձեռնությամբ ներկայումս աշխատանքներ են տարվում բարձրացնելու ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության մակարդակը:

Աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման ուղղությամբ բարելավել է ՀԱԱՀ կայքի՝ միջազգայնացմանը վերաբերվող բաժինը: 2018-19 ուս. տարում դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվել է մոտավորապես 240 հայտարարություն, որից 36-ը՝ Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի մրցույթների, 35-ը՝ Էրազմուս+ ծրագրի ՀԱԱՀ մասնակցիների արտասահմանյան փորձի, 35-ը՝ Էրազմուս+ ՀԳ2 «TOPAS» ծրագրի վերաբերյալ, իսկ մնացածը՝ տարաբնույթ տեղեկատվություն (մրցույթներ, կրթաթոշակներ, տեսանյութեր և այլն):

Հետադարձ կապի ապահովման և կարիքների վերհանման նպատակով ՄԿԴ-ն պարբերաբար հատուկ հարցաթերթիկներով հավաքում է շարժունության մասնակիցների կարծիքը, որի արդյունքները վերլուծվում են ՄԿԴ-ի աշխատակիցների կողմից և առաջարկվում թույլ կողմերի վերացման միջոցներ: ՄԿԴ-ի կողմից շատ է

կարևորվում տեղեկատվության տարածումն ու մրցույթների անցկացման թափանցիկության բարձրացումը, այդ պատճառով բոլոր հայտարարությունները տարածվում են հնարավոր բոլոր միջոցներով, իսկ մրցույթներն անցկացվում են հատուկ հանձնաժողովով:

ՄԿԴ-ի կսոմիղ վերանայվեց և ՀԱԱՀ ԳԽ-ի կողմից հաստատվեց միջազգային շարժունության մրցույթների անցկացման ընթացակարգը, իսկ ներկայումս 2 այլ ընթացակարգեր գտնվում են մշակման փուլում:

ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. Ընդլայնել համալսարանի մասնակցությունը միջազգային շարժունության ծրագրերին և բարձրացնել շարժունության համալսարանական ցուցանիշը:
2. Բարձրացնել միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը,
3. Դասախոսների շրջանում ուժեղացնել միջազգային ծրագրեր գրելու կարողությունները:
4. Ստեղծել օտար լեզվով դասավանդվող մասնագիտությունների/առարկաների տվյալների բազա:
5. Կահավորել համալսարանի ուսանողների համար նախատեսված կացարանը:

S	W
• համալսարանի ղեկավարության աջակցությունը և հետաքրքրվածությունը՝ միջազգայնացման գործընթացում • միջազգային, փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացում • դեպարտամենտի աշխատակցիների ակտիվ գործունեություն	• անհրաժեշտ մակարդակի օտար լեզվին տիրապտող ուսանողների և աշխատակիցների ոչ բավարար քանակ • համապատասխան ուսումնական ծրագրերի, ընդունելության կարգի, համապատասխան վարձավճարների բացակայություն օտարերկրյա ուսանողների համար

	• ոչ բավարար սեփական միջոցներ տարբեր վերապատրաստման դասընթացներին ՀԱԱՀ աշխատակցիների և ուսանողների մասնակցությունը ֆինանսավորելու համար • ոչ բավարար կենցաղային պայմաններ ՀԱԱՀ հանրակացարանում • կրեդիտների փոխճանաչման և դրանց ամրագրման հստակության բացակայություն
O	T
• ագրարային ոլորտի միակ բուհը ՀՀ-ում • ագրարային ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից	• ուսանողների թվաքանակի պակասում • ֆինանսական օժանդակության ոչ բավարար մակարդակ • որոշ ԵՄ համալսարանների կողմից համագործակցության պայմանների խախտում